

ՔԱՆՈՒՆՈՐԿԱՐՈՒԹԻՒՆ

| | |
|------------------|-------|
| Պուշկարինյ | համար |
| Տարեկան | 12 մր |
| Լեցանակայ | 6 " |
| Արտասահեակի | |
| համար - սերի կամ | 15 " |
| Լեցանակայ | 8 " |

| | |
|------------|--------|
| Անկերիկայի | համար |
| Տարեկան | 3 սր. |
| Լեցանակայ | 1.50 " |

Իսկանուրեան սուր անու
ջին երեւոյն համար 40 ս.
իսկ վերջին երեսի հա-
մար 20 սանթիլ է. երե
հին անկերիկայի համար
համար 20 0/0 գեղջ կըլ

Վաճառայի համար մի րի 10 սանթիլ

ՇԱՐՄՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՐԻՆ. ՔԱՂՎԱՅԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԻՏՏՈՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔԵՐԹԻ ԵՒ ՇԱՐՄՈՒՄ ՕՐԵՐԸ

R. P. Kalémcarian, Mechitharistengasse
(Autriche)
W. 4.

Redaction du journal
"Charjoun"
Vienne (Bulgarie)

Redaction du journal
"Charjoun"
Vienne (Bulgarie)

Redaction du journal
"Charjoun"
Vienne (Bulgarie)

Արտասահեակի համար
մեկին

(20 ԱՆԿԵՐԻՄ)
Պուշկարինյ համար
մեկին

(15 ՕՒՆԹԻՄ)
Գրութիւնքիս կս չեկ տրուի

ՇԱՐՄՈՒՄ Ի ԲԱՏՆԱՐԻ ԳՐՈՒՆԴԸ ԲԱՏՆԱՐԻՆԸ ՊԵՏԻ ԵՒ ԳԱՆՆՈՒԿ ՎՃԱՐԻ

ՀԱՅ ՍՄԱՐՏՈՒ ՎՆԱՅԱԿԱՐ ԵՒ ՎԱՏ ԲԱՏՆԱՐԻՆԸ

Հայը առհասարակ քաջութիւնը, առնականութիւնը չունի իր հասարակական, ընկերային նոյն իսկ անհատական յարաբերութիւններէ մէջ որոշ. կարուկ և անկեղծ լինելը թէ իր յարաբերութիւնը որոշելու և թէ իր գիտացի պարզ անհատի, հասարակական գործիչի կամ ընկերային բարոյութեան նպատակով հիմնոված ու է մարմնի արժէքը ժամանակէն մէջ անգ զնել: Հայը առհասարակ սովորութիւնը ունի գաղտնի կերպով աշխատել. ստորին միջոցներով դաւեր սարքել, միեւնոյն ժամանակ զուգահեռաբար քննել դաւադրութեան նիւթ եղած անհատի կամ մարմնի առջեւ:

Հայի, զժբաղխտարար, յատկանշական այս գիծը մէջ տեղ գնելու մեղ ստիպում է հանգուցեալ Սիսական ընկերութեան գումարի խնդիրը:

Այդ ընկերութիւնը ունեցել է գործադիր վարչութիւն, ընդհանուր ժողով, բացառիկ քննիչ յանձնաժողով, տարիներէ ի վեր գոցվել է. և հաճախ այսօր է հարց բարձրանում թէ՛ այդ ընկերութեան գրամագլուխը ո՞ւր է գնացել. ինչո՞ւ լռել այսքան տարի և այսօր մէջտեղ բերել այդ խնդիրը. պարզ է շատ. այնժամանակ զանազան անձնական շահերը ստիպել են լռել, այսօր այդ շահերը մէջ տեղ չը կան, և պէտք է խօսել:

Ի հարկէ սա պատճառ չէ որ մենք չը հետաքրքրվենք թէ այդ գրամները ո՞ւր են գնացել, բայց մեր համոզումով մի անուրանալի ճշմարտութիւն է թէ նոյնքան մեղաւոր են այդ խընդիրը գիտցողները, որչափ զբամբ կ'ըլլողները, եթէ իրապէս այդպիսիները գոյութիւն ունին. իսկ եթէ դրամ կ'ըլլող գոյութիւն չունի մի ինչեւ հիմա լռողները և այսօր միայն այդ տեսակ մի խն

դիր հրապարակ նետողները աւելի պէտք է ստորնանան, ու հասարակութեան թուք ու մուրին արժանանան:

Շատ պարզ և հասկանալի է թէ՛ ձեռնով խնդիրը մէջտեղ նետողները կամ պէտք է ապացուցեն թէ Սիսական ընկերութեան վարչութիւնը գրամները կերել է, կամ թէ իրենք սուսանան:

Եւ մենք մեր ճիգերը պիտի թափենք որ մեղադրողները հաստատեն իրենց ասածները կամ թէ իրենք մտաւոր իրր զրպարտիչներ:

Այդ, ցաւալի է անցեալը ժամանակին չպարզելու, ապից դաւեր սարգելու, երեսից քննելու սովորութիւնը, և շատ կարտաբեր է հասարակական կեանքի համար. ու այն հասարակութեան բոլոր խաւերի մէջ կայ. նոյն իսկ յեղափոխական կոչված դասակարգի մէջ. ես իմ անհատական փորձերով շատ եմ տեսել. ծննդի եմ մարդիկ, ընկեր, շտերիմ անտրոսով, որոնք ամբողջ օրերը իրենց ընկերով հետ ժամանակ են անցկացրել. քննել են, իսկ գիշերները, գաղտնի, նրա բացակայութեան դաւել են:

Տեսել եմ ընկեր համարված մարդիկ, որոնց քննումը կաթոլիկ ստորին կարգի եղբայրներ իր քննումի հետ չէ համեմատվի և այդ մարդիկը, իրենց ընկերով հետ ճամբորդել են, իբր թէ անձնական գործով, լրտեսել են նրան և նրա գործին խառնելով և վերջոյ արձեւ ու յայտարարել թէ ժամանակ չունենալով իրենց գործով զբաղվելու, յեղափոխական գործով են զբաղվել և իրենց ճամբու ծախքը յեղափոխական կուսակցութիւնի ընդունել:

Տեսել եմ մարդիկ, որոնք ու է ընկերով սխալը քննել, ոչինչ են համարել, շարունակել են իրենց յարաբերութիւնը այդ ընկերով հետ, և վերջը նրան շինել են հասարակութեան օրհամարանքի նիւթ, որովհետեւ

այդ ընկերը թուրթիւնը չէ ունեցել ապուշներ խնդրով կառավարվել կամ թէ իրեն անկախ կարծիք ունենալ հասարակական ու է խնդրի առիթ:

Աւհան, այդ տեսակ ստորին քննող, գաղտնի պար մեր մէջ. կան շատ, որոնք միայն պէս իր կարասիներէ մէջ են ընկնում և ամբողջ կարասի իւրը թափելու ստիպել տալիս:

Իրանց հետ պէտք է մտաւոր, զբանջ պէտք է շախմատել. և մենք հաստատ օրոշումը ունենք այդ մտաւոր մեր գերադրական ատրիանին հասցնել անպայման հաստատացած լինելով թէ՛ այդ մտաւոր մեր աւելի մեծ բարիք արած կը լինենք հայ հասարակութեան, քան այլեւայլ մանրուէր երեւակայական սրխ բազործութիւններով:

ԿԱՑՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

(Պոստի թղթակցութիւն վեչերնա քոչրայի)

Թէեւ խոտլայոյ չէ՛ Հայաստանի այլեւայլ շրջաններու մէջ բոսածնա վերջին տեղեկութիւններու, որոնք հասած են Բերայի օտար շրջանակներուն, այնու ամենայնիւ ամեն ինչ գէշ վիճակի մէջ է:

Իմ ստացած տեղեկութիւններու համաձայն 150 հայ ապստամբները, որոնք վերջերս երեսան վանայ արւարձաններէն միայն մէջ, ու ասան մը մէջ ամբացան, գայն ամբողջ վերածելով. խաբեր են զիրենք պաշարող քիւրտերը և զօրքերը ու կրօնք են ող և առողջ խուսափել զէպի լեռները զինուորներէն հետապնդուելով:

Նոյնը պատահեր է և հարկը հօգիտ կազմված հրոսարարի մը հետ, որը աւելի մեծ ու մէջ հալածուելով կապստանին վանայ լճի կղզիներէն միայն վրայ. Զօրքը չը կարենայով զանոնք վանել իրենց բռնած զիրենք ապստամբներու նպատակին հասնող զնգակներու տարափէն, երկու օր շարունակ կը ամրակոծէ. վերջը նկատելով որ ապստամբները կը լռեն, զանոնք ջնջված կարծելով յարձակու

կը գործեն կղզիին վրայ, Սաղայն շուտով կը հարկեն, որ ամբողջ հրոսարարը գիշերը փախեր է, և այժմ ապահով տեղ է:

Շատերը կը հաւատան թէ թուրք զօրքերուն անհոյութիւնը, որոնք թողուցած են որ երկու հրոսարարներն ալ փախին, ամէնքն ալ կառավարութեան աչքին արդէն կակածեւ լի անձեր կամ թէ որոնց ծնողները զօրքի և քիւրտերու ձեռքով անխնայ կտորված են, խորամանկութիւն մըն է, մանուրա մը որպէս զի հայկական խռովութիւնները շարունակուին և կարելի ըլլայ արդարացնել, որոշ չափով, սխտեմատիքաբար կազմակերպուած կտորածը և հայ ցեղին ջնջումը:

Բանի մը ժամանակէ ի վեր վանայ լճի մօտ գտնուող Շահիրան փոքրիկ քաղաքը կը գտնուի քիւրտերու և զօրքերու տրամադրութեան տակ որոնք ամէն ուղղութեամբ կը թափանին իբր թէ Անդրանիկը և իր ընկերները, որոնք այժմս ցրուած են Սասնոյ մէջ, բռնելու համար:

Ատոնք ամէն տեսակ թալան կընեն այսպէս կոչուած աղաչին իշխանութիւններու առջ, որոնք բան մը չեն ըներ մեղաւորները ձերբակալելու համար:

Օր չի անցնի որ մէկ կամ երկու հայ շրջաններն, կանանց, աղկաւնց բռնաբարուները և գողութիւնները նկարագրել անկարելի է: Ոչ ոք չի համարձակիր ոչ միայն քաղաքէն դուրս ելլալ այլեւ անէն դուրս ելլալ:

Մուշի մէջ ալ կացութիւնը նոյնն է. ինչպէս կերբեք մեծ կտորածէն հրաժարած են, որպէս զի Եւրոպայի հասարակական կարծիքը չը գրգռեն, և ընդունել են մէկ մէկ բայց անբողհատ սպանելու սխալ մը: Ամստան մը մէջ սպաննուած են հարիւր մարդիկ և վիրաւորուած: Այս թիւերը բոլորովին ճիշտ են:

Վա՛ի մէջ վայրկեանէ վայրկեան կտորածի կրտասանն (եւ կը խօսիմ հիւսիստոսներու տուած տեղեկութիւններուն վրայ հիմնուած): Տեղական իշխանութիւնները զէնք բաժնուած են թուրք ընակչութեան 150 հողիւնոց հրոսարարի յարձակումէն առթիւ որ ամբացած էր, և պահակազօրքը սակաւաթիւ, պաշտպանուելու համար:

Ապստամբները աներեւութացան, բայց ընակչութիւնը գեռ զէնքը կը պահէ:

Ատոր մէջ է թագնված վտանգը. եթէ վանայ մէջ խռովութիւն

ներ ծագին, առոր անձամբ իշխանութիւնը պիտի ըլլայ:

Շատերը կը զարմանան թէ ինչու պատրիարքը և հայ Եկեղեցական խորհուրդները բան մը չեն ընել, չեն աշխատիր վերջ դնել տալու համար Հայաստանի այդ զգալի կացութեանը:

Իրապէս, նորին սրբութիւն Օրմանեանը զրեթէ ամէն օր եռանդուն զիմուներ կընէ, ինչպէս և երեկ, թէ նըրազին և Բ. Դրան. քրդերու, իշխանութեանց և զօրքերուն արարչներուն գէտ, որոնք ամէնքն ալ նոյն խմորէն են: Յաճախ պատրիարքը սպառնացեր է հրաժարական տալ, և տուած անգամ է, բայց նորէն ևս առած սպառնալիքի տակ:

Իսկ ինչ կը վերաբերի Ազգային ժողովին, ան մեծ մասամբ կազմուած է պետական բարձրագոյն պաշտօնեաներէ, անոնք որոնք պաշտօնեաներ չեն այլ մատակարարներ, բանքերներ և յօշոյսներ եւ այլն, որոնք ասանքն ասանքն թեան հետ և առ ամենէն էական է: Այդ պայմաններուն մէջ մարդ չի կրնար այդ տեսակ մարդոց վրայ յոյս դնել, որոնք այնքան շահ ունին Համիտին արիւնտ աէժիմը տեւել տալուն մէջ:

Պատրիարքական տագնապ մը շատ հաճելի պիտի ըլլար, մեր իշխանութեանց համար, քան թէ պատրիարք մը ըլլայ, որ անդադար զիմուներ կընէ Հայաստանի մէջ կատարված գազանութիւններուն համար:

Ահա ինչու սրբազան Օրմանեանը, որը նուրբ զիւանդատ մըն է (!) մինչև օրս վերջնապէս իր հրաժարականը տուած չէ. լաւ գիտնալով թէ այդ քայլով փոխանակ իրեններուն օգուտ բերելու աւելի պիտի գէշցնէ կացութիւնը:

ՀԱՅ ԵՐԱՃՆՈՒԹԻՒՆ

Պր. Փրօֆֆ-Գալֆանան իր վարպետին մեծ երաժշտագետ վէնան տ'հնտիի պատուակալ նախագահութեան ներքեւ, ու երաժշտաբան (միզիօկրաֆ) Էօփէն տը Սօլնիէրի նախագահութեամբ, Պօտինիէրի թատրոնին մէջ անցնալ ամիս բանախօսութիւն մը կատարեց Հայ ժողովուրդին զեզարուեստական յատկութիւններուն ու մանաւանդ անոր երաժշտական դերին վրայ:

Նախագահը իր հայրենակիցներուն (քանի որ սրահը զբաւուած էր, գրեթէ ամբողջութեամբ, Եւրոպացի երկեսն բազմութեանէ մը, և ուր հազիւ տուներակ մը հայեր (հետաքրքրուած էին գալու...) ներկայացնելով մեր երիտասարդ ազգակիցը կարգաց հետեւեալ նամակը:

«Մի սիրելի Փրօֆֆ-Գալֆանան, (՝) Օտարներուն մեր արուեստին նկատմամբ ցուցուցած փութկոտութեանը հանգէպ մերիներուն ալ անտարբերութիւնը շատ յատկանշական է, արդարեւ...»

Ոչմեան լողունկն է. «չը գրգռենք վայրի խորը, վերջի վերջոյ վայրի խորը պիտի ճմուռի... Այսպէս է, կարելի է, Թուրքիոյ ճակատագրին վերջը...»

ՍԱՍՈՒՆԻ ԿՈՒՆԵՐՈՒՆ ԱՌԻՊՈՎ

Արիւնտ քուսկանը

—Դարնան ընդհարու մը անխուսափելի կերեւայ... Թող հայու ինչը այդքից չը թողնէ Սասուն առեւտրի օրհասական վիճակը:

Աս կարճ տողերով յեզափոխականը 1904ի արիւններու ահազանգն էր որ կը հնչեցնէր...

Եւ իրօք ալ, եթէ թշնամին չի կրցաւ կամ չուզեց իրագործել շատոնց ի վեր իր զփոխային մոյշին մէջ պըտրտոցած ահուկի ծրագիրը, 1904 ի ռուսկանը կուտար անոր բաւական յարմար առիթներ, խորտակելու համար աս Ապագայ Մեծ Վտանգը.—Սասունը...

Ռուս - Ճարտնական պատերազմի պատճառով Եւրոպայի ու յազարութիւնը գէպի ծայրագոյն արեւելքով կը լանուած ըլլալու պարագան մէկ կողմէ:

Ու ատ առթիւ Ռուսիոյ քաղաքականութեան նպատաւոր հանգամանքը միւս կողմէ՛ որ ամէն պարագայի մէջ հանակարծիք պիտի գտուէր Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող յեզափոխական ուժերը անաղմուկ կերպով օնշնչանելու ոճիրին, քանի որ յեզափոխական ուժերը դամակուտ սուրբ պէս կախուած կը թուէր և արժարագոյն ատեւին պայթելով, ռուսական փափուկ և հրանդ գերքին ատենը՝ պիտի կրնային խանգարել և կտորել մեծ Արշին ազդեցութիւնը Հայաստանի գործերուն մէջ: Ես գեռ մէկ կողմ կը դնեմ եկեղեցական կալուածներու խնդրէն դեռ նոր բորբոքուած ռուսական հակահայկական տրամադրութիւնը:

Իսկ երրորդ նպատաւոր պարագայ մը կրնար սեպուիլ Թուրքին համար Մակեդոնիոյ մէջ յեզափոխական

գործին տկարութիւնը կամ դադարումը և մեզի բաղդակից ատ դրժբազաններուն Աւստրիոյ և Ռուսիոյ միջոցով խաղցուած օրինները...

Աս ամէնը ինքնին կը բաւէին որ արիւնխում Համիտը ձեռք առնէր իր ոճիրի ծրագիրը...

Ու փետրուար Ծին Յունանի ողբալի կոտորածն ու աւերումը.—յեզափոխականներ ձեռք ձգելու պատրուակին տակ—առաջին ազդանշանն էր Սասունի գլխուն պայթելիք աղէտին, Եւ առանց երկար բարակ միջոց տալու, որ Յունանի կոտորածին արձագանքը տարածուի և ատ առթիւ Եւրոպայի գրգռուած հանրային կարծիքը, եղած զիմուներու դեր մը խաղան՝ թշնամին կարելի եղածին չափ շտապեց, հաւաքեց խուժանը և Սասունի ահալուը կարգադրելու ձեռք զարկաւ:

Ու աս անգամ թշնամին իր հերուան փորձառութիւնէն օգտուելով ճարպիկ գտնուեցաւ.—միջոց չի տըւաւ որ յեզափոխականը և Թերեոս ժողովուրդն ալ հերուան պէս լեռները քաշուի:

Յարձակումը տեղի ունեցաւ ձմեռը, երբ ամբողջ Սասունը ձիւնով ծածկուած էր և ժողովուրդը գրեզներուն մէջ փակուելու ստիպուած...

Աւերուող է կարծեմ արիւնի այս նոր դաւին առթիւ եղած հրահանգներն ու կատարութեան շարժումները մերկացնող թղթակցութիւններն ու հեռագրաւուրները մէջ բերել:

Կը լաւէ աչքի առջեւ ունենալ քան հազարէ աւելի կանոնաւոր զօրքերու և պաշտպօզութեան վարքերի խուժանը...

Օրինակը թարմ է, և անցածը գիտենք:

Յիշենք միայն համառօտ կերպով մը ատ կոնիները անհրաժեշտ ըլլալուն համար ատ շարժումներուն յայտնական կարգը գիտնալ:

Աւերումի և արիւնի առաջին ազդանշանը—Յունանի աւերութենն ու արիւններէն ևս—կուգայ տող քրդերու գրոհը—Տալանի վրայ և թալանումը, ուր Մատենցիները յեզափոխականներուն հետ կատակուին Տալանէրցիներուն օգնութեան

փութալ Հոս հայ զեզափոխները կը միանան այս վերջիններուն և գիւղը թշնամին աւերելու չի ձգելու համար իրենք կարեն և կը դիմեն կէլիէ կըման:

Հայուն ինքնապաշտպանութեան կամ ինքնօգնութեան իրաւունքը... ըլլալիք բան է Թուրքիոյ մէջ, երբ հայուն արտասահմանցի հայ-թուրք եղբայրներն են որ թուրքէն աւելի կը հակառակին ատոր...

Եւ այսպէս ալ, քորտ ամբողջ թէ իր թէ զինքը մղող կառավարութեան և թէ արտասահմանի հայ Ահմէտ Րիզաներուն խաթրը խօշ րնելու համար—կը խուժէ զէպի կէլիէ կըման: Հոս ալ ժողովուրդը կրկին ինքնապաշտպանութեան կըստպուի զիմու և թշնամին կատարել կոնի մը ետք, ես կը մղուի թողնելով ինչ 25 զիւններ, իսկ հայերէն միայն մէկ:

Ալ հերթը կառավարութեանն էր, Այս անգամ զօրքը կը բարձրանայ Սասուն կուսակալին և մեր առաջնորդներուն հետ:

Հայերը Ելնուրգն ալ կը վտան թշնամիին չի ձգելու համար և կերթան զէպի կէլիէ կուգան:

Ապրիլ 1ին թշնամիին կողմէ յարձակումը կը պատրաստուի Սէմալի վրայ, ուր յեզափոխականները անմտանալի Հրայրի առաջնորդութեամբ ես կը մղեն թշնամին մինչև կէլիէ կըման մէկ զոն տալով և 10ր խելով:

Թշնամին կը դիմէ նենգամտութեան:

Առաքել վարդապետը կը զրկուի իրրու պատգամաւոր թշնամիին կողմէ մերիներուն: Յեզափոխականները պատասխանելու համար կը տրալուին Գեղալէն հաւաքուիլ, և հաւարն է կը փրթի...

Կուսակալը կուգէ նենգութեամբ յեզափոխական պետերը մէկ տեղ հաւաքել և ստափուս խեղդել: Յեզափոխականները կը զիմադրեն:

Թշնամիին խուժանն ու զօրքերը կը յառաջանան Սէմալ, Հրայր տեսնելով թշնամիին յարձակումը, Դաւաղն ու Սէմալը կրակի կուտայ և ժողովուրդին հետ կը բարձրանայ մօտակայ բլուրները: Զօրքերը թնդանօթ կը պարպեն:

մը զոր ևս կը պաշտեմ. այն է՝ կրօնական ծագումը ամբողջ արուեստներու: Հին Յունաստանն ունեցաւ իր կրօնքը. այն արուեստը որ առկէ ծնաւ, չէր կրնար մերիին ըլլալ. մեր քրիստոնէական կրօնքը միայն կարող էր ծնունդ տալ այն արտասայտիչ (եփարեսիֆ) արուեստին որմէ կը ըլլի մեր ամբողջ արդի երաժշտութիւնը:

Ու կարելի է տեսնել որ՝ կերպերու (մօտ) ասիական միջավայրէն յառաջ եկած առաւելագոյն բազմազանութեամբ՝ ձեր հայ երաժշտութիւնը կը ներկայացնէ միեւնոյն յատկանշաւները ինչ որ մեր Գրիգորեան երգերը (Շանթ կրեկօրիսն): Վասն զի այս երկու երաժշտութիւնները սերած են միեւնոյն սկզբունքէն, այն է՝ կրօնական Հաւատքը:

Անցնելով ժողովրդական երգերու, կը տեսնենք որ, ինչպէս արդէն պէտք էր ըլլալ, ձեր Հայ արեցանական երգերուն ու մեր Ֆրանսական երգերուն—նոյնիսկ հնագոյններուն—միջև տարբերութիւնը բաւական զգալի կ'ըլլայ, եղերնդական շնչտի տեսակէտով մանաւանդ, ինչպէս կը մատա

նանչէք խիստ շատ իրաւամբ:

«Այս տարբերութիւնը շատ բնական է, քանի որ առաջին սկզբունքէն (աստուածային կամ քրիստոնէական սկզբունքէն) քիչ առ քիչ հետնաւորով երգելը կը ձգտին հետզհետէ ընդունալ պատկերներն ա՛յն երկիրներուն կամ ժողովուրդներուն որ զանոնք կը ծնին և, այսպէս, ա՛լ աւելի կը ցուցնեն իրենց ծննդավայրը: «Յամենայն դէպս, կ'ուզեմ, իմ սիրելի Փրօֆֆ-Գալֆանան, շնորհաւորել զՁեզ ջերմօրէն՝ ձեր երկրին արուեստին վրայ ձեր կատարած ուսումնասիրութեանը մասին, ու Ձեզի ուղղել յայնպէս մաղթանքներով հանդերձ՝ իմ յարգանքս և իմ բարեկամութեանս հաւաստիքը:

«Վէնիսիան տ'էնՏի»

Այս նամակը, որ մեր հայրենակցին աշխատութեանը տեսակ մը յառաջարկ կը կազմէ, բուն ծափահարութեամբ ողջունեցաւ, որմէ յետոյ Պր. Փրօֆֆ-Գալֆանան սկսաւ իր բանախօսութիւնը:

Ընդհանրապէս օտարներուն մեզ նը

բայց յեղափոխականները չի նայած իրենց աննպատակ գործերն և թնայած իրենց դուրս ծուխու մուխին զօրքերու անաջխատացումը կը յաջողին միջոց մը կատարել մինչև որ ժողովուրդը կը յառաջանայ կէլ:

Աս ձիւնոտ սարերուն և անյարմար գործերուն մէջ կը շարունակեն կատարել կոխներ, թնդանթի դէմ փամփուշտն է որ կելնէ... հոս կ'իյնայ անմոռանալի Հրայրը, կրպօն, Մարտոն և ուրիշներ:

Ասկից ետք մերինները կը նահանջն զէպի կէլի, իսկ թշնամին կը յառաջանայ: Բիշ հաք կը հասնի Անդրանիկը և կառողները սիրտ առած, կատարողէն կը յարձակին: Թշնամին կը ցորի: Հայերը կը հալածեն զանոնք մինչև Սէմայ և Շէնքա, խելով անոնցմէ շատ մը զոհեր և 18 հատ զէնքեր:

Ապրիլ 15ին զօրքերը և քրդերը յարձակում մը կը գործեն կէլի մէկ թաղին վրայ և ետ կը մղուին:

Սասունի ձիւնոտ լեռները չեն կրնար սակայն պատասխարի ո՛չ ժողովուրդը ո՛չ ալ յեղափոխականը:

Չորս կողմէն ժողովուրդը կը լեցունի կէլի-կուզան վերջին յուսահատական կողմը մղելու համար:

Թշնամին կը պաշարէ կէլին և կ'ըսկի թնդանթի հարուածները: Յեղափոխականները կը գրիւտողին փակուած դիրքերուն: Երկու օրուան մէջ 250է աւելի թնդանթներ կարձակուի պաշարուած կէլի-կուզանի վրայ: Յեղափոխականները կը ստիպուին ուսմանը տակէն ձիւնապատ լեռները բարձրանայ անհելով իրենց հետ ողջ մնացող տղամարդիկները և կ'ինքնը:

Ու երեւակայեցէ՛ք անկէ ետք թշնամին անուշի ոճիւրները ձեռք անցնողներուն հանդէպ ու ցուրտին ձիւնին, անօթութեան աւերը թշնամին հետ միացած...:

Կէլի գրաւումէն և աւերումէն ետք, թշնամին իր թիւը աւելի բտուարացած կը գիւմէ Տաւրիկ:

Տաւրիկը հրանալի քաջութեամբ կը գիւմարէ ապրիլ 24էն մինչև մայիս 9, գրեթէ 12 օր, և վերջի վերջոյ թշնամին բազմութեան և ուժին առջև տեղի կուտան:

Կէլի սիրտ ձակող տեսարանը կը

փոխադրուի նաեւ Տաւրիկ: Կուր անկէ ետք շարունակուեցաւ ձիւնապատ լեռներու խորշերէն՝ շարաթներով:

Ու թափուած արիւնները, իյնող նահատակները մեզի զրկեցին Վրէժի-կՏԱԿԸ...:

Դեռեւս որոշ յայտնի չէրաւ, կը որեւնեքուն մասնակցող ընկերները առիթը շունչեցան մեզի պատմելու ո՛չ թշնամիէն իրուած զոհերու քանակը — որ արհամարիւր բան մը չէ — ո՛չ ալ մեր պաշտելի նահատակներու ճշգրիտ թիւը, որ բերնէ բերան եղած է 1, 3, 6, 7, և մինչև 9 հազարի...:

Եւ այդ նահատակներուն շուրջը ի՞նչ տեսակ ձայներ կը բարձրանայ, ի՞նչ տեսակ զգացումներ կը պոթուկան, ի՞նչ տեսակ սրտեր կը բացուին: Անոնք, մինչև ինը հազարի բարձրացող նահատակներու արիւնը վերջի գոռ արձագանք մը տուեր է և ուժեղ թափ մը արթնցուցեր — եղափոխական — կառող ընկերներու մէջ...:

Անոնք, մինչև ինը հազարի բարձրացող նահատակներու արիւնը, օխտն-օտար մարդասէր Եւրոպային ձեռքը կը ծառայէ իրիւ նոր փաստ մը քանակներու դարու քաղաքակրթութեան պատգանբը մասնանջող և հայ ազգի կրած անհանգստութիւն վիճակին վերջ մը դնելու իրաւացի և ազդու զէնք:

Անոնք, մինչև ինը հազարի բարձրացող նահատակներու արիւնը, կը ծառայեն, դժբաղդարար հայ անունին անարժան վատերու ձեռքը իրիւ զէնք՝ յեղափոխութիւնը և իյնող նահատակներու ապրող ընկերները հարուածելու և Սուլթանի ոճիւրները արդարացնելու փաստաբանական նիւթ... Ի՛նչ մեծ նախատիք հայ անունին...:

Թէ՛հ և իսկպէս տխուր և զղուշիլ, բայց ես հետեւեցայ և պիտի հետեւիմ դեռ քանի մի յօդուածով աս վերջի ձայնին, աս զգացումներուն, աս սրտերուն և մէջտեղ դնեմ — անոնց բոլոր հրէշութիւնները, անոնց բոլոր ազգասպան-օճարադրութիւնները:

Ժիրայր

Յիւլիպէ

Տէ՛ր խմբագրապետ, Կարդացի ձեր 550 թիւ «Շարժում» լրագիրը, որուն չորրորդ երեսին առաջին սրահին մէջ ինձ եւ ներկայ պատ. Հողարարութեան Տիրատեսակաւոր Փիլիպոս Հալաճեանի նկատմամբ կարգ մը հարցումներ ուղղած էիք տարիներ առաջ քաղաքի մէջ գոյութիւն ունեցող Սիրահեան ընկերութեան գոյութիւնը և գրաւորութիւն մասին, եւ մասնաւորապէս մեր երկուքին վրայ պարտք կը դնէիք որպէս զի հրապարակաւ յայտարարենք անոնց որու մօտ գտնուիլը:

Այո՛, ձեր ակնարկած ընկերութիւնը կազմուեցաւ 1893 մայիս 1ին հաճութեամբ շատ մը համակրողներէ, եւ կարճ ժամանակամիջոցի մը մէջ անդամներու նիւթական ու բարոյական աջակցութեամբ բտտ բաւականի նախանձելի վիճակ մը ունեցաւ: Սրահի ընկերութեան կանոնագրութեան յօդուածներու տրամադրութեան համաձայն Գործադիր ժողովն ստանձնած էր ընկերութեան ընթացիկ գործերը վարելու հոգը, եւ իրեն պարտականութեան սահմանին մէջ գտնուած գործերը որոշող գործերով մը, որ սակայն նախապէս ընդհ. ժողովի հաւանութիւնը չստացած չէր արտօնուած ընկերութեան հաշուոյն առնել: Ժամիկ եւ վարձակ մը և է առարկայ մը:

Երբ ընկերութիւն մէկ տարուան շրջանը բոլորեց, ընդհ. ժողովի դիւանը Պէ՛տք տեսաւ հաշիւ պահանջել գործադիր ժողովէն, որ երկար վարանուէ մը ետքը վերջապէս յաջողեցաւ պատրաստել մի հաշուեկշիւ: Իրիւ առեւտրապետ ընդհ. ժողովի զայն ժամանակին իւրաքանչիւր անգամից ցոյց տուի որ իրենց զիտողութիւնները անոր մասին յայտնեն:

Ընկերութեան անդամներէն շատերը իրենց բանաւոր առարկութիւնները յայտնելով՝ ստիպողաբար պահանջեցին Գործադիր ժողովի յանձնած հաշուեկշիւի վերաքննութիւնը: Ուստի ընդհ. ժողովի դիւանը անդամներու կողմէ այս խնդրի մասին ըրած առարկութիւնը օրինական զեւնելով՝ ձեռնարկեց հաշուեքննիչ մի յանձնախումբ կազմելու, անդամներու միաձայն հաւանութեամբ հաշ-

ուեքննիչ յանձնախումբ ընտրուեցան Տիրաք Յովհաննէս Հաճօլեան, Բիւզանդ Յակօբեան և Գրիգոր Սիմոնեան:

Ահա ներկայիս կցեղով յայտարարութեան ճշգրտութիւնը հաստատող այն վաւերագրութիւնն պատ. խմբագրութեանը կը զրկեմ, եթէ հարկ տեսնէք կրնաք զանոնք հրատարակել:

Կը խնդրեմ հրատարակութեան վերջին մը վերադարձնել հաճիք: (*)

Սիրաք Մարտիրոսեան
6 Սեպտ. 1904
Վառնա

Մ. Խ.—Այդ հաշուեկշիւները մասին մտք կը խօսինք միւս անգամ, սակայն նամակի մէջ չէ պարզված թէ գրաւորութիւնը ո՛ւր մնացած է: Կը հրաւիրենք քննիչ յանձնախումբի անդամներին եւ նոյն պարտն Սիրաք Մարտիրոսեանին պատասխանել այդ հարցին:

«ՍԻՍԱԿԻՆ» ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՆԴԻՐԸ

Պարոն Սիրաք Մարտիրոսեան, ինչպէս արդէն իր նամակից էլ երեւում է, մեզ ուղարկել է երկու հաշուեկշիւ և մի ցուցակ այդ վաւերագրութեան անդամներին:

Հաշուեկշիւներին մինը կրում է Գործադիր Վարչութեան ատենապետ Փիլիպոս Հալաճեան, Պր. Պէլլիկեանի և զանձապահ Պ. Մ. Չգօնեանի ստորագրութիւնները:

Երկրորդ հաշուեկշիւը կազմված է քննիչ Յանձնաժողովի կողմից ստորագրել են Գր. Սիմոնեան, Յով. Հաճօլեան և Բիւզանդ Յակօբեան:

Հիմա այս բոլոր պարտններին հրաւիրում ենք բացատրել այս գրաւորութիւնը մեզ:

—)o(—

կատմամբ արտայայտած գնահատումին անկեղծութիւնը — մանաւանդ երբ ան կ'ստանայ ձեռնհասութեան նկարագիր մը — իրաւունք կուտայ մեզ ինչեւ հոս բարիքեան երաժշտական թերթերու համակարգից ընդունելութիւնը սոյն բանախօսութեան նկատմամբ:

Ահա անկէ՛ նախ՝ ի՛նչ որ կը գրէ այս մասին (Բրիլի Միլիթրայ) (1 Յուլիս 1904) երաժշտական ամսագրութիւնը:

«... Այս ուսումնասիրութիւնն պարտնի, արդարեւ, շահաքրքրիլ ամէն երաժիշտները, վասն զի խնդիրը վերականգնանքնելու վրայ է նախնական արուեստ մը՝ որ եւ հետեւաբար բացարձակօրէն անկեղծ է. մերինէն շատ սարբեր է ան. եւ սակայն լի երազներով եւ ըզձանքով (աւրիտաւորով), որ խիստ մօտիկ են մեզի: Ըստ պարզ, արուեստականութեան զերծ փորձի նախադասութիւններով բայց նաեւ համոզումի եռանդով մը ու տպաւորիչ ճշգրտութեամբ մը Պր. Փրոքֆ. Գալֆանեան կը պահանջէ այս արուեստին կարեւորութիւնը արեւելեան քաղաքակրթութեան մէջ:

Հայերը արական հողին վրայ եղած են ձիւն այնպէս ինչպէս Յոյները եւրոպայ, — յաղթական պարտուածներ՝ որ, արուեստներու գանձը պահպանելով, յաղթողները կը հարկադրեն իրենց դպրոցին մէջ ուսանելու: Ու եթէ ճարտարագիտութիւնն ու կերպընկալ (ըլաւսիվ) արուեստները չը կարողացան գորգանայ Տաճկի նման ժողովրդի մը տիրապետութեան ներքեւ: Երաժշտութիւնը եղաւ հոս ինչպէս այլուր՝ հարստանաբանութիւնը միջնադարէն, եւ իրիւ անմարմնեղէն տաճարն անոնց՝ որոնց տունները կը քանդէին... Այնպէս որ Հայ ժողովուրդին հին երգերուն — նոյն իսկ ուրախութեան երգերուն — այս ձանրալուր եւ ինքնամիտի հանգամանքը կեանքի խաւի խոշտանգութեան հոգիները մեզի կը պատմէ: Պր. Փրոքֆ. Գալֆանեան մեզի ծանօթացուց ատենցմէ շատ մը հատուածներ, փոխառեալ Շարակաւի հին հաւաքածոյէն, Գրեթէ ամէնքն ալ խիստ գեղեցիկ են. մանաւորապէս Ծնունդի սա հին երգը՝ «Սիլիք էս կից», կամ իրիկուան սա երգը՝

«Լոյս զուարթ», եւ կամ սա՛ «Ուստի բուրբով խնկոց անոյառնութիւն» որուն երաժշտական կազմութիւնը շատ կը նմանի մեր Գրիգորեան երգերուն: Այր. փրոքֆ. Գալֆանեան նուազեց նաեւ տաճկերէն բառերով քանի մը երգեր, բացատրելու համար թէ «տաճկական» ըսուած երաժշտութիւնը հայ երաժշտութեանն ամանցուած է: Է՛ն վերջը նուազեց «Փրոք» մը որուն հեղինակը ինքն իսկ է, եւ որ կը ցուցնէ ա՛ն օգետը զոր արդի երաժիշտները կրնան քաղել հայ արուեստին հին աւանդութիւններէն: Ունկնդիրները՝ հրապուրուած՝ վերադառնին «Օրոր»:

«Լ. Լ.»

Բաց ատի, Յունիսի 15ի Լը գուրիկո միլիթրայը, Յունիս 30ի Լը Մօնճ Միլիթրայը, Յունիս 18ի Բարիզի Զեյթունի գոգեստով ու համակրանքով յիշատակեցին այր. փրոքֆ. Գալֆանեանի բանախօսութիւնը: Եր. մանապէս Ռըիլի. Տիւ պիկի Յուլիպէ թիւը երկար յօդուած մը նուիրած է

մեր հայրենակցին աշխատութեանը վրայ, եւ սպած անոր կենդանագիրը քանի մը կենսագրական ծանօթութիւններով: հրատարակած է նաեւ «Կոնուկ»ը, այր. փրոքֆ. Գալֆանեանի սրբագրած ու ներդաշնակած հրգերէն մէկ ուրիշը՝ «Արաքսի արտասուքը» որուն կընկերանայ խմբագրական ներքաղական մը՝ Վէնսան տիւնտի երկուստարգ ու տաղանդաւոր աշակերտին վրայ:

Կը մաղթենք ի բոլոր սրտէ որ Պր. Փրոքֆ. Գալֆանեան բաղդն ունենայ գտնելու մեր հայրենակիցներուն բարոյական ու նիւթական քաջաբերութիւնը, յառաջ տանելու համար իր այս խիստ շահեկան եւ ազգօգուտ ձեռնարկը:

Անտոյիկ Դ.

(Բանասեր)

կայսերական ժառանգի ծնունդը տարի մուսա է խօսելու մեծ իշխաններուն կեանքի քանակութեան և հարստութեան մասին: Մեծ իշխանի տիտղոս կրելու իրաւունք ունին կայսեր որդիքը, եղբայրները, հօրեղբայրները և կայսերին թոռները, իսկ Յարին միւս մնացած ազգականները կը կոչուին իշխաններ:

Ռուսիոյ մէջ այժմ կան 34 ողջ մեծ իշխաններ, զահաժառանգին հետ միասին: Անոնցմէ ամէն մէկը տարեկան երկու կէս միլիոն ֆրանք թոշակ կը ստանայ, ուրեմն ամբողջը 80 միլիոն: Բացի այդ եկամուտէն ամէն մէկ մէծ իշխան ունի իր սեփական գոյքերը, որոնք միշտ կուտան աւելի փարթամ ապրելու: Կը հաշուի որ մեծ իշխաններուն և իշխանուհիներուն պատկանած հողերուն տարածութիւրը 5000 ք. մղոն է, այսինքն Սուրբազան Ռուսաստանի մէկ քառորդը:

Բացի այդ մեծ իշխանները ունին 325 պալատներ, չը հաշուելով անթիւ ամբարայն տները և գլխակները: Անոնց ծառաներուն թիւը 100 հազարի կը հասնի, ամբողջ զօրաբանակ մը:

Կսեն թէ Իլէվէն սպաննողին գրպանին մէջ այս բոլորի մասին գրուած գիտողութիւններ գրանուեր է և գեռ ուրիշ տեղեկութիւններ:

(Թիւ 1117) (Վերջ Բոշրա)

ՌՈՒՍԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԸ

«Կրամտանին» և «Նովոստի» թերթերը սկսած են հաշտութեան մասին խօսիլ, Լիւսո-եանկի պարտութենէն վերջը:

«Կրամտանին» կը կարծէ որ հիմակ ամենէն յարմար և բարեյաջող վարկեան է խաղաղութեան առաջարկ մը ըլլալու, որը Ռուսիոյ բրէյվիթը այնքան քիչ կը խախտէ, որչափ 1856ի բարիզեան դաշինքը Խրիմի պատերազմէն վերջը:

Իսկ «Նովոստի» կըսէ. եթէ Ռուսիան կորցնէ շինական Լիւսո-եանկը, մինչեւ անգամ ամբողջ Մանչուրիան և անոր հետ միասին Բորթ-Արթուրը, Ռուսական մեծութիւնը և երջանկութիւնը չը պիտի տուժեն:

«Մենք, կը յաւելու նոյն թերթը, ապրած ենք առանց անոնց, պիտի կարենանք և վերջը անցնիլ առանց անոնց»:

Ռուս զօրքերուն թորք զօրքերուն հետ միացած հայ կտրիճներուն կոտորուի պատկերը զոր հրատարակուեցաւ Յրանսայի մէջ, «Նովոստի» վրէժիա» թերթին առիթ

տուր է դառն խօստովանութիւն մը ընել որ իրապէս ուսաները գէշ վարուեցան տանջող փոքրիկ եղբայրներուն հայերուն հետ, սակայն պատհերին մէջ տեղ հանած է գաղանթի թիւնները սուտն և հայ յեղափոխականներուն վայելուչ չէ ուսաները այդպիսի գաղանթներ կարացնել եւրոպայի առջեւ:

Մենք կսենք, թէ սուտ չէ. և հայ յեղափոխականները պէտք չունին սուտի դիմելու:

«Նովոստի» վրէժիա» շատ շատ առաջուց պիտի խօսէր փոքրիկ եղբայրներու մասին, կոչը ոչ այս նեղ օրերուն մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՌԵՐ

Թ Ո Ւ Ր Ք Ի Ա

Իշխան Ֆէրտինտնտի և Ֆրանց Ժօզէֆ Կայսեր միջեւ տեղի ունեցած անսակցութիւնը դեռ շատ կը պարզուի Բ. Դուռը: Սօֆիոյ թրքական գործակալ Ֆէրուիս պէյի յանձնարարութեամբ և Աւստրո-Պուլկարական մերձեցման հետեւանքներու մասին տեղեկագիր տալ:

— Սեպտեմբեր 5ին Պուլէն վիէննա կը հեռագրեն թէ Սուլթանը Ֆերման տուած է ռուսական Կամաուր նաւատորմի գեղջեղներ անցնին ղէպի Մայրաքոյն Արեւելք: Այդ նաեւը քառաձուր պիտի տանին:

— «Բոլ» Բօրէսը. «Թերթը կիմանայ թէ Սուլթան Համիտի զաւակներու ծառաները ձերբակալուած են, որովհետեւ մասնակցած են Մուրատին յուզարկաւորութեանը:

ՌՈՒՍԻԱ

Բեթերպուրկէն Պերլին կը հեռագրեն թէ Յարը հոկտեմբերին պիտի Գրինշֆ երթայ, ներքին գործոց նախարարին խորհրդով: Հոն Յարի կողմէն նշանաւոր ճանիւր կ'սպասուի, որոնք պիտի պատասխան ըլլան գիմաւորող պատգամաւորութեան:

— Ռուսական «Լէննա» ապրանքատարը, որուն համար ձառնի կողմէն բողոք տրուած էր Միացեալ Նահանգներու կառավարութեան, վերջացեր է այդ նախն զինաթափ րլլալով:

Նախին հրամանաւոր Պերլինսկիյ ամերիկացի ծովակալ Կուտրիկի կհաղորդէ որ տրամադիր է նաւը պիտի թափ ընել և թողուտութիւն կուզէ նաւը ամերիկեան նաւարաններու մէջ շտկուի: Նախագահ Ռուզվելթ հետեւեալ պայմանները հեռագրած է.

- 1. Նախին լիովին զինաթափ ըլլալը:
- 2. Հաշտութենէն յետոյ նաւը պիտի Ռուսիոյ յանձնուի:

3. Նաւաստիները Մանրիկա պիտի մնան, մինչեւ որ պատերազմող երկու կողմերուն հաւանութիւնը ստացուի հայրենիք վերագառնալու համար:

ՌՈՒՍ—ՃԱՐՈՆԱԿԱՆ
Պ Ա Տ Ե Ր Ա Ջ Մ

Ըստ «Թայմզ» թերթի ստացած հեռագրի ներքին ռուսները կը շարունակեն նահանջել ղէպի Մուկտէն, իսկ ճարոնացիները առաջ կը խաղան:

Ռուս յետագահ զօրքերուն և Օրուի զօրքերու միջեւ փոքրիկ ընդհարումներ տեղի ունեցեր են:

— Գերմանական թերթ մը կիմանայ թէ Մուկտէնի մէջ Քուրօթիկի նախագահութեամբ զինուորական խորհուրդ մը տեղի ունեցեր է, որուն մէջ Մէյնտօրք, Չերնեվով և Սոպոլով զօրավարներ կարծիք յայտնուր են թէ պէտք է Խուլսոյի հովիտը աւրացնել, որովհետեւ կը նախատեսուի թէ ճարոնացիները հոն պիտի տեղաւորուին: Նաեւ ամրացուի թէ ինչը նահանջը աւելի քիւրացնելու համար:

— Սպաներու պակասութեան պատճառով ձգուած է այդ պակասը լրացնել են թասպաներով և երկաթուղիին զինուորական պաշտօնեաներով:

— Մարշալ Օյաման Թօքթօ տեղեկագրած է հետեւեալը. — Օքուն գերի բռնել է 10 ռուս Լիւսուանկի մէջ, և աւար 20 ձի 2290 հրացան 127 սայլ, 659,030 փամփուշտ, մեծ քանակութեամբ փայտ, ալիւր, բրինձ և զգեստ: Աւելի պակաս քանակութեամբ վերցուցած են Գուրօքին և Նոսզուն:

— Թօքթօն Բէյթի գործակալութիւնը կիմանայ թէ ճարոնացի իշխանութեանց և օտար թղթակիցներուն միջեւ պատահած միջադէպերուն առիթ Մարշալ Յամակաթան հեռագրած է մարշալ Օյամանին թէ պատերազմին նպատակն է ձառնի համար խաղաղութիւնը ապահովել, և քաղաքակրթութիւնը տարածել ի նպատակ ըստ ժողովրդներու: Ատոր համար պէտք է որ իրաւունքի սկզբունքը գործադրուի բոլոր թղթակիցներուն հանդէպ, քանի որ անոնք զիստ չեն բերած պատերազմական գաղտնիքներուն:

— «Թայմզ» կիմանայ թէ ամսոյ չորսի պիչերը ճարոնացիները ռմբակոծեր են Բորթ-Արթուրը ու թնդանթի ռուսները մը Ուկրէնի վրայ գտնուող զինուորական մթերքներու պահեստ մը օդը հաներ են:

— Ռուս Բալթիկեան նաւատորմի զազիւ կարենայ գալիք գարնան ճամբայ ելլել:

— Գաւրոյ մէջ Բալթիկեան նաւատորմի զրտեսող ճարոնացի Պերլինի ճարոն գեապանատան զինուորական կցորդը բեր է:

— Բէթիքի գործակալութիւնը Քուրօթի բանակատեղիէն կիմանայ թէ Գուրօքի իր զօրքով արգէն Լիւսո-եանկի և Մուկտէնի մէջ անգը կը գտնուի:

Բեթերպուրկէն կը հեռագրեն թէ ռուս պաշտօնական ցանկին մէջ ռուսները հետեւեալ կուրուստները ունին Լիւսո-եանկի քով:

Սպանուած են երկու մէկերակներ Բոյնին և Բուրքովին, 250 սպաներ, 20,552 զինուոր, ճարոնացուց ձեռք անցած են 230 թնդանթներ, նախական կուրուստի արժէքը 57 միլիոն ռուպլի:

— Լուսուանկ կը հաղորդեն թէ Բեթերպուրկի մէջ կը խօսուի շուտ հաշտութեան կարելիութեան մասին: Թէ Ռուսիան և ձառնիան կը հաւատան որ իրենցմէ ոչ մին պիտի կարենայ յաղթել վերջնապէս:

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԻՆ

Կարծեմ .886 թիւին, Պոլսոյ «Հայրենիք» թերթը մի քանի ամիս իր թե օրաթերթ հրատարակուեցաւ Սարկոս Աղաթեանի խմբագրութեամբ: Այդ ժամանակ Պոլսոյ հոտոներու վրայ գրած մէկ վէպս 4. Փաշական ստորագրութեամբ եւ Միշել եւ Գրիգոր վերտառութեամբ տրուած է անոր մէջ, գրաւելով չորս թերթերու բանասիրական բաժինը: Արդ, ո՞վ որ այդ թիւերը գտնելով ինձ զրկէ, անոր կը նուիրեմ մէկ տարեկան «Շարժում» եւ կանխորէն շնորհակալութիւնս:

Տօքթ. Կ. Փաշայան
Հասցէս՝
Տր. Բաշայան, (Սեփականութիւն)

ՆՕԹԱՅՈՒ ԲԱՆԱՅԱՅՆ ԵՐԳԵՐ
(Ղիւնսիայ)

Ֆիլիպի Երգեցիկ-Թաւար խումբը իր ունեցած պատրաստի երգերուն վրայ աւելցուցած է նորեր:

Գինները շատ աժան:
Ամեն տեղի երգեցիկ խումբի անդամներու համար մէկ երեսը 5 սանթիմ: Ուրիշ գնողներու համար երեսը 10 սանթիմ: Ծամբու ծախքը գնողներուն վրայ:

Վարչութիւն
Ֆիլիպի Երգ-Թաւար, Երկեստ խմբի (Կնիք)

Հասցէ՝
Mr. Ervant Aladjajian
Philippopolie (Bulgarie)

ОТГОВОРНИКЪ
Мурадъ-Ераносянъ

Печатница „Взаимность“ Варна